



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԷՆ



(Շարունակութիւն, տես Բազմավէպ 1928, էջ 3)

14. Խաչկայ մահուամբ՝ աթորը հինգ-ամեայ պարապութենէ մը վերջ կ'անցնի Պաշխառնեաց տոհմին, որոնք յաջորդաբար կը գրաւեն զայն, և բոլորն ալ քաղկեդոնական են: Առաջինն է Գրիգոր Բ վկայասէր (1065-1105), որդի Գրիգոր մագիստրոսի, որ հպատակ յոյն կայսերութեան և ինքն իսկ յունադաւան, նոյնպէս ալ դաստիարակել տուած էր իւր որդին ու ժամանակ մը նաև ժողովրդ վահրամ (նախկին անուամբ)՝ Կոստանդնուպոլսի մէջ, ինչպէս կը թուի անոր գրած թղթէն, թէ «յատտիկեցի կրթմունսըն, մինչ տակաւին յանտիական տիս հասեալ, ի տէրունեան ճնմարանին զարգանա»։ Եւ իւր կենսագիրն ալ կը վկայէ՝

Թէ «քաջ տեղեակ էր յունական լեզուին և դպրութեանն»։ Յետ կաթողիկոսութեան ի Կոստանդնուպոլիս գնաց, ուր մեծ ընդունելութիւն գտաւ կայսերէն ու պատրիարքէն։

Սակայն նա իւր սրատես աչքը նոր Հոռմէն դարձուց դէպ ի հինն ալ, ուր կը տենչար հասցնել նաև իւր քայլերը, և առաջին անմիջական կապը ձգել Լուսաւորչի ու Պետրոսի աթոռներուն մէջ, Արղարե 1074ին գնաց հռն՝ «յերկրպագութիւն նշխարաց սրբոց առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի»։ Այդ առթիւ շատ բնական է որ ծանօթացած լինի նաև Գրիգորի պապին. որով և «մեծապէս պատուեցին զնա ազգն Պռանգաց», կ'ըսէ Կիրա-

1. Մագ. Թգր. 285. — 2. Սոփեթ, ԺԴ, 21. — 3. Անգ. — 4. Ռուս. 211. — 5. Կիր. 54.



կոս¹, Նոյն պապին յետոյ 1080ին պատուիրակութիւն մ'ալ զրկեց՝ ի հերքումն հայ եկեղեցւոյ մասին եղած ամբաստանութեանց, թղթով մը հանդերձ՝ որ կորսուած է, մինչդեռ պատասխանը կը մնայ տակաւին ու կը զգացնէ նպատակը²։ Ընդ հակառակն իւր տեղապահը Գէորգ հակաբաղկեզոն մ'էր, յայտնի առ Յովհաննէս պտրք։ Ասորոց զրած թղթէն³։ Օրմանեան ըստ իւր սովորութեան ջանաց ժխտել Վրկայասիրին երթն ի Հոռով, որովհետեւ մեր պատմիչներէն Կիրակոս միայն յիշեր է զայն, և Ուռնայեցին «զնաց ի Հոռով» կ'ըսէ ըստ մէկ տպագրին⁴։ Բայց զո՛ր վաստակ։ Ձի նախ՝ Մատթէոսի ուրիշ օրինակներ «ի Հոռով» կը գրեն, ինչպէս ցոյց կու տայ Վասդարշապատու 1898ի տպագրիւր, զոր եւ կը գործածեմ։ Երկրորդ՝ Հոռով յոյն ազգին անունն էր, և զայդ գործածելու համար՝ պէտք էր ըսել յոգնակի «ի Հոռովս», ինչպէս այլուր կը գրէ միշտ⁵։ Երրորդ՝ Նոյն պատմիչը կ'ըսէ՝ «զնաց ի Կոստանդնուպոլիս և անդուստ ի Հոռով»։ արդ՝ ի Բիւզանդիոն գընացողն արդէն Հոռովոց մէջ էր, և «անդուստ» ո՛ր կրնար երթալ, եթէ ոչ «ի Հոռով» միայն։ Եւ այսպէս Օրմանեանի մարթինը՝ զրչագրական սխալներէ ճշդ-մարիտ պատմութիւններ հանելու⁶ անգամ մ'ալ կը ձախողի։

15. Վկայասիրի յաջորդ Բարսղի (1105-1118) կրօնական համոզման մասին բան մ'ըսուած չէ։ Այսքան յայտնի է՝ որ ազգական էր իւր նախորդին⁷։ և նա իւր խնամք ու դատաւարականութեան յանձնեց իւր երկու մատակը քնաթոռները Գրիգորիս ու Ներսէս⁸, ապազայ քաղկեդոնիկ կաթողիկոսները, որոց խմած ջրին համեմատական կ'ենթադրուի աղբիւրն ալ։

Գրիգորիս յետոյ հայրապետ (1118-1166), մեծ մտերմութիւն ու սէր կը գտնէ

Լատիններէն՝ թէ Սնտիոքի և թէ Երուսաղեմի մէջ⁹, ուր կը հրաւիրուի մասնակցելու անոնց ժողովոց¹⁰։ Շարունակող մ'է իւր մեծ անուանակցին սկսած արեւմտեան քաղաքականութեան։ Թէպէտ կորսուած՝ կը յիշուին Ռորիոս Բ և իննովկենտ Բ պապերու թղթերը ծննդեան տօնին և ս. րաժակի ջրախառնութեան մասին¹¹։ Ոթն կը պատմէ թէ 1145ին մեր կաթողիկոսը հրեշտակներ կը յղէ ի Վիտերբոյ՝ առ Եւգինէոս Գ, և «ի կողմանէ այնր (Հայոց) եկեղեցւոյ մատուցալ հնազանդորթիս յամենայնի հանդերձ ողջունիւ», որուն պատմիչդ ալ ներկայ էր, պատարագի բաղարջին, ծննդեան տօնին և այլ խնդրոց մասին, որոնք վիճի Նիւթ էին Հայոց և Յունաց մէջ, քահանայապետին դատաստանին կը դիմէին¹²։ և նա կը պատասխանէ նամակով մը, զոր տեսեր ու կը յիշէ Սոյ 1342ի ժողովը¹³։ Հոռովայ գահուն հետ մեր հայրապետաց սկսած այս միութիւնը դարեր կը տէէ անընդհատ, և որ առանց դաւանակցութեան կամ քաղկեդոնականութեան չէր ու չէր կարող լինել։

16. Աւելի լայն մտածութիւն մ'ունեցաւ Գրիգորիսի եղբայրն ու յաջորդը Ներսէս, Նոյն իսկ հարազատին վախճանիէն յառաջ, ընդարձակելու այդ միութիւնը նաև Յունաց հետ, և որուն ձեռնարկեց ու շարունակեց երբ աթոռն ելաւ (1166-1173), թողով մեզ իւր չքնաղ թղթակցութիւնը Բիւզանդիոնի արքունեաց ու պատրիարքին հետ։ Առաջին կցորդութիւնն եղաւ կայսերական փեսայ Ալեքսի հետ, որուն զրածին մէջ յայտնապէս կը դաւանի զբիւրստոս և յերկոց կատարեալ թնոթեանը՝ յատուածայնոյ և ի մարդկայնոյ՝ մի անհնապորթիս (և ոչ թէ մի թնոթիւն) կատարեալ, անայայելի և անբաժանելի բնութեամբ¹⁴։ «Մեռաւ, կ'ըսէ, իշխանաբար մարդկային մեկնանացո թնոս

1. Կիր. 55. — 2. Գաւն. Ա, 229. — 3. Գր. բրքոց. 351, 355. — 4. Արք. 1280-81. — 5. Ուռն. 18, 30, 34, 85 ևն. — 6. Բլմ. 1926, 191. — 7. Սոփրք. ԺԳ, 29. — 8. Անգ. ԺԳ, 30-31. —

9. Անգլ. 122. Կիր. 67. — 10. Հմմտ. Զմե. Գ, 58. Շեր. արք. 168-58. — 11. Անգ. 171-72. — 12. Գաւն. Ա, 235-86. — 13. Շեր. արք. 183. — 14. Շեր. Ըգգ. 86.

րեամբս, և մնաց կենդանի աստուածային և անմահական թեոթեամբն՝»։ դարձեալ երկու բնութիւն և երկու ներգործութիւն։ իսկ առ Մանուէլ կայսր թղթին մէջ կ'ըսէ. «Այսպէս և զկամսն ոչ այլ և այլ ասեմք, որպէս թէ աստուածային կամքն հակառակ լինել մարդկայնոյն կամաց և կամ մարդկայնն աստուածայնոյն, (այս իմաստով է որ չի ընդունիր «այլ և այլ» կամքը), այլ ի միոյ էութենէն (անձնաւորութենէն) կրկին եղելոյ կամաց՝ ըստ այլ և այլ ժամանակի. երբեմն աստուածային՝ յորժամ զաստուածութեանն կամէր ցուցանել զգործութիւն, և երբեմն մարդկային՝ յորժամ զմարդկութեանն կամէր յայտնել զխոնարհութիւն»։ և թէ «մարդկայինն աստուածայնոյն հետեւիտ կամաց. (ուրեմն դարձեալ կրկին)։ զի յորժամ կամէր և թոյլ տայր, յայնժամ զիտքն կրէր մարմինն»։ Եւ վերջապէս՝ թէ «ըստ կամացս օրինակի զոր ասացաք, ի միոյ անձնիչխան կամաց աստուածութեանն երկոց յինել անհակադասարար՝ աստուածայինն և մարդկայինն, հաւատամք և ներգործութեանն նոյնպէս (կրկին) յինել՝ աստուածայնոյն և մարդկայնոյն ի միաւորութեան անդ»։ Ուրեմն Շնորհալին կը դաւանէր երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն՝ անձնաւորական սերտ միութեան և աստուածայնոյն առաջնորդութեան մէջ։

Միանգամայն կը շարունակէր պահել Պահլաւունեաց գիտակցութիւնը Հոռմայ աթոռոյն հանդէպ, — թէպէտ անոր հետ ուղղակի կցորդութեան առիթ ունենալը չէ յիշուած իւր հայրապետութեան օթնամեայ կարճ շրջանին մէջ։ — Եւսեօթ են իւր Խղեւիոյ ողբին այս սողեւը.

«Եւ զու Հրոովմ մայր քաղաքաց
Գերապայծառ և պատուելի,
Մեծին աթոռող Պետրոսի՝
Առաքելոց զըլխաւորի.
Եկեղեցիդ անշարժելի
Ի կեփայեան շինեալ վիմի,

Դրանց զըժոխոց անյաղթելի,
Եւ կնիք երկնիցն բացողի»։

Իսկ առ Մանուէլ թղթին մէջ այսպէս կ'ըսէ. «Լուաք՝ թէ սուրբ և առաջին ամենայն եկեղեցւոյսպետաց (զորս երուսաղեմեան տապգիրը ջնջեց ի պատիւ հեղինակին), հայրապետն Հոռմայ և փոխանորդն Պետրոսի առաքելոյ՝ յիւրոց անտի իմաստնոց առաքեաց իօսել առաջի սուրբ թագաւորութեան ձերոյ վասն միաբանութեան հաւատոյ»։ Հոռմայ հայրապետին առաջնութեան համոզումը տեսանք նաև ժամանակակից արեւելեան նշանաւոր վարդապետի մը՝ Մխիթար Գոշի գրչին ներքև. «ապացոյց՝ թէ այդ զապափարն ընդարձակ էր Հայոց մէջ։ — Հակառակ այս վկայութեանց՝ զուտ ու թունդ հայադաւան» մ'էր Շնորհալին, կ'ըսէ Օրմանեան. և թէ «Հոռմի կամ Պետրոսի նկատմամբ (անոր) ցերթողական գովեստներ կամ հոետորական դարձուածներ՝ ոչ դաւանութիւն կը կազմեն, ոչ հոռմեական դրութիւն կ'արձագանգեն»։ Բայց ինչո՞ւ ինքն Օրմանեան ալ չգործածեց այդ ցերթողական կամ հոետորական ձևերն ի գովեստ Հոռմայ, և չաշխատեցաւ եկեղեցեաց միութեան, որով իւր թունդ հայադաւանութիւնը հաստատէր։ Ազգապատմի հեղինակը կը կարծէր՝ թէ բաւերու փոթորիկը կը բաւէր՝ յեղաշրջելու պատմութիւնն իւր ախորժած կերպին։

17. Մահը թոյլ չտուաւ՝ որ Շնորհալին աւարտէր յունական միութեան գործը. և շարունակութիւնը թողուց եղբորորդւոյն ու յաջորդին՝ Գրիգոր Տղայի (1173—1193)։ Սա խմբեց Հոռմկլայի ժողովը, որուն ներկայ էին ու ստորագրեցին հայրապետին հետ՝ Աղուանից կաթողիկոսը, և 31 հայ արքեպիսկոպոսոնք ու եպիսկոպոսներ մեծ ու փոքր Հայաստանէն, Կիլիկիայէն ու գաղթավայրերէն. ինչպէս Անւոյ, Սիւնեաց, Դունի, Կարսի, Կարնոյ, Սեբաստիոյ, Տաբատնի, Անտիոքայ, Երու-

1. Անդ՝ 92. — 2. Շնորհ. Ընդհ. 126. — 3. Անդ՝ 127. — 4. Շնորհ. Ընդհ. 117, և ԳԵԼԵՍ. Ս. ՂԵՐ. —

5. ԲԵՏԷ. 1926, 197. — 6. ԱԶԳԿ. 1446.

սաղեմի եւ այլն. հետեարար մեր հին ժողովոց մէջ մեծագոյնն ու հեղինակազոյնը, որ Հանդիսապէս ընդունեցաւ երկուց բընութեանց դաւանութիւնը. և առ Մանուէլ կայսր ժողովական թղթին մէջ յառաջ բերելով ա. Հարց խօսքերը Բանին նկատմամբ, ըսին. «Արդ այսքան և այսպիսի վկայութեամբք Հաստատեալ գիտեմք՝ զի ոչ ի վերայ միայ թնութեան տեսցան բանքս սուրբ հարցս, այլ ի վերայ երկուց միացելոց, որ և ներգործութեամբ և կամ մօք ներգործէր զներգործութիւնս (կրկին), երբեմն իբրև զԱստուած և երբեմն որպէս զմարդ, սակայն ի միոյ տեճնաորութեան տնօրինէր զանազան ներգործութիւնք»։ Եւ առ Միքայէլ պատրիարք թղթին մէջ կրկնեցին այսպէս. «Արդ խոստովանիմք համաձայն ձեզ ի Քրիստոսի անճառ միութիւնն երկու թնութեան տեսութիւն»։

Հոռոմոց պահանջներու ցուցակը կայ՝ եկեղ. միութեան վերաբերեալ վաւերագրաց մէջ, առանց պատասխաններու՝, Բայց կայ նաև անոր միւս օրինակը՝ պատասխաններով հանդերձ, զորս կ'երևի թէ պատրաստեւ էին ու Հասան յանձնելու։ Անոր ը յօդուածին մէջ կը կարդանք. «Սահման և պատճառ Դ ժողովոյն գտանի ի մէջ մեր, որ է երկրն՝ որ նախ քան զնա՝ համաձայն, սակա որոյ և բնկալեալ եղէ ի մէջը՝։ Դիտելի է ևս՝ որ Հայք ընդ Յոյնս թղթակցութեան մէջ չեն խառնեւ Բաղկեղոնի անունը, անոր մասին նախապաշարելոց ցնցում չպատճառելու համար։ Եւ. իմաստասիրի քաղաքականութեան կը հետեւին, վարդապետութեամբ զբաղելով քան վարդապետներով, որպէս զի մտերն որսային նախ ճշմարտութեան կողմ, և ապա ժողովին մօտեցնէին։ Լամբրոնացին ալ չյիշեց զԲաղկեղոն իւր Ատեն նաքանութեան մէջ. բայց յիշելէն աւելի էր իւր այս խօսքը. «Ձի նոյն և Աստուած և մարդ տանի զՔրիստոս և երկու թնութիւն մանաւանդ առաջինը ոչ միայն զէութիւնն,

այլ և զսահման էութեանն յայտնապէս մակարդէ. իսկ երկրորդս՝ լոկ զէութիւնն առանց սահմանի։ Ապա յայտ է՝ թէ որ Աստուած և մարդ դաւանեաց, զայլ և այլ թնութիւնս ի վերայ միոյ անձինն ստոգնեաց»։ — Եւ որպիսի արտաոտոց բռնաբարութիւն էր պատմութեան՝ այն համարձակ յայտարարութիւնը՝ թէ «Լամբրոնացին յունադաւան չէ», նա որ այդ յայտնի խոստովանութեանէն զատ, հրապարակաւ պանծացուց նախկին հայ քաղկեդոնիկներն ալ։

Հիւսիսային վանքերու վարդապետները խեղճ կը նայէին միութեան գործին, և միաբան նամակ մը գրեցին կաթողիկոսին, իրենց կարծեցեալ սրամտութեամբ՝ Յունաց կողմէն զրուածոց մէջ նշմարելով. «պատրուակեալ յինքեանս զՅոյնս դաւանութեան ապականչացն ուղիղ դաւանման»։ Իրենց հին նախապաշարման թմբուկը կը զարնէին, որոց կողովի պատասխան մը տուաւ Գր. Տղայ, և ակնարկելով Բաղկեղոնի՝ այսպէս կ'ըսէր. «Ո՛ր երբ մերոց սրբոց հարցն հանդիպեցաւ անդ. և կամ յումմէ՝ արդեւ տեղեկացաք զնոցայն աղանդ և զմերս ճշմարտութիւն. և կամ որով լեզուաւ ուսոյց և ետ մեզ Դէսկորոս սուրբ և Տիմոթէոս կուզն և Պետրոս զայլն։ Մի՛ թէ անցեցիք էին սոքա, և կամ ձուրոյգետացիք, կամ վաղարշապատեցիք և դունեցիք, կամ հայադաւանք լեզուաւ և ազգաւ Խնդրեմք՝ եթէ զիմոր այնչափ կապեցաք ի բանս սոցա, և վասն որոյ իրիք ուղղութեան»։ Առ Գր. Տուտէորդին զբաժին մէջ ալ այսպէս կ'ըսէր Լեոն պապի մասին. «Ի Հոռոմ երկու լուսաւորք են, Պետրոս և Պաւլոս.։ Եթէ նոքա ի նա (Լեոնի մէջ) քնակեցան աստուածային զօրութեամբն և Յոգաշի՝ կարելի է, այլ ոչ աղարտելի»։ Յետեւ կը բերէր Օմենեցւոյն. ճառին մէկ կտորն ալ ի ջատագովութիւն երկուց բնութեանց, և յեցած անոր վրայ՝ կը պայքարէր հակառակորդ

1. Շնորհ. Ընդհ. 189, 196. — 2. Անդ՝ 156. — 3. Պաւլ. 264. — 4. Լւբ. Թղթ. 151-52. — 5. Սրման.

Աղթ. 1548. — 6. Բզմ. 5. — 7. Շնորհ. Ընդհ. 308. — 8. Անդ՝ 322. Լւբ. Թղթ. 76.

դաց դէմ¹։ Այս էր Հոռովկայի ժողովոյն և իւր նախագահին ընթացքը։

Սակայն բախտը չօգնեց և ոչ իրենց։ Մանուէլ կայսեր մահը վրայ հասաւ (1180) ու խափանեց միութեան գործը։ Հինգ տարի վերջ (1185) Գր. Տղայ նորընտիր իսանակ Բ Անգեղոս կայսեր խնամոց կը յանձնէր փոխպապոյոյի Հայերը, միանգամայն նորոգելով միութեան քաղաքները, զոր կրկնեց կայսրն ալ թղթով մը, որոյ պատճէնը միայն կը մնայ դեռ²։ և ուրիշ բան չենք գիտեր։

18. Բայց շատ լաւ գիտենք նոյն կաթողիկոսին փարումը Պետրոսի աթոռին։ 1184ին թուղթ ու պատուիրակութիւն յղեց առ Ղուկիոս Գ պապ, և պատասխանն ընդունեցաւ՝ պաշտօնով ու միջոցով հանդերձ։ Իւր գրածին — որ կորսուած է — բովանդակութիւնը կ'իմանանք պատասխանէն՝ ուր կ'ըսուի. «Ողջունէք զսուրբիս (Հոռովայ եկեղեցւոյն) հաստ, և սիրէք յամենայնի զսուրբ միաբանութիւնն» և այլն³։ Այս բարբառն էր գործածեցր Գր. Տղայ իւր թղթին մէջ։

Կայ նաև Գր. Ապիրատի (1194-1203) հպատակութեան թուղթն առ իննովկենս տիոս Գ, բոլոր հայ կղերին անուամբ, որ կը սկսի այսպէս. «Ձեզ՝ որ էք զլուս յետ Քրիստոսի, կարգեալ ի նմանէ, և զլուս կաթողիկէ հոռովմական եկեղեցւոյ՝ մօր ամենայն եկեղեցեաց, ... Գրիգոր ծառայ Յիսուսի Քրիստոսի, շնորհիւ Աստուծոյ կաթողիկոս ամենայն եկեղեցւոյն Հայոց, որդի սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ, որ է հիմն օրինաց ամենայն քրիստոնէից»։ Եւ կը յարէ՝ թէ անոր հրեշտակը՝ եպս. Մոգունս ապլի՝ «եցոյց մեզ զհրաման ձեր, և մեք զնոյն բազում յօժարութեամբ լուսք, և սրտի մտօց յանձն առաք զօրէնս և զեղբարյութիւն գերագոյն եկեղեցւոյն Հոռովմայ ... և յօժարութեամբ կամիմք հնազանդել հրամանի ձերում. և հաստատու-

թեամբ միան հրամանի ձերում ամենայն արքեպիսկոպոսք, եպիսկոպոսք և ամենայն ուխտ եկեղեցւոյս մերոյ՝ որ են յաշխարհիս մերում»։ Մեկնութեան չի կարօտիր հայ եկեղեցւոյ այս պաշտօնական դաւաճութիւնը, որուն համեմատական պատասխան մը տուաւ նոյն պապը⁴։

19. Սրբ ժամանակները՝ որ է 1198ին՝ կ'օծուէր Ռուբինեանց առաջին թագաւորը մեծն Լևոն, Եւրոպոյի հզօրագոյն պետին Փրեդերիկ Շիկամօրուս գերման կայսեր և իննովկենս պապին հրամանաւ, «ի հնազանդութիւն եկեղեցւոյն Հոռովմայ և ըմբռնութիւն (empereur) Ալամանաց», կը գրէ Կիրիկիոյ տարեգիրքը⁵, զոր կը կրկնէ Սմառտ⁶։ Եւ անոցմէ թագ խնդրեց յետոյ (1210) նաև իւր յաջորդին Ռուբինի⁷։ Իւր պսակման համար Լևոն շնորհակալութեան թուղթ գրեց պապին, յորում կ'ըսէ՝ թէ «բաղձամբ և տնչամբ զսմենայն Հայս աստ և անդ ի հեռաւոր կողմանս սփռեալ»՝ ամեն աստուածային ողորմութեամբն ի միութիւն սրբոյ եկեղեցւոյն Հոռովմայ⁸։ Ասոր հետ կան պատասխանը և յետոյ փոխանակուած ուրիշ թղթեր ալ⁹։ Լևոնի ընդունած պատուոյն համար շնորհակալութեան թուղթ մ'էս գրեց պապին՝ իւր պսակիչը Գր. Ապիրատ, լի մեծարանօք և հնազանդութեամբ¹⁰։ Այսպէս հայրապետութեան հետ մեր նորակազմ թագաւորութիւնն ալ պաշտօնապէս կը միանար Պետրոսի աթոռին հետ. և այնուհետև անխզելի կը պահէին այդ կապը. որով Սոյո 1342ի ժողովը դեռ կրնար ըսել՝ թէ «ժողովուրդք Կիրիկիոյ առ հասարակ, որպէս կաթողիկոսն, թագաւորն և այլ առաջնորդք եկեղեցականք և աշխարհականք՝ միացեալ են ընդ եկեղեցւոյն Հոռովմայ, այսպէս և ժողովրդականք»¹¹։ Աւելորդ կը համարիմ մի առ մի յիշել բոլոր անձինքը և անոնց յարաբերութիւնը Հոռովմայ հետ, որոց մասին ընդարձակօրէն

1. Լժբ. ԹԳՐ. 23, 30 ևն. — 2. ԽԺբ. Բ. 1527 Ս. ԳԼԻ. — 3. Զատ. Գ. 142-44. — 4. Գալան. Ա. 346. — 5. Նոյն՝ 343. — 6. ՏԳՐ. ԿԻԼ. 288. — 7. Մթատ՝

109. — 8. ՏԳՐ. ԿԻԼ. 304. — 9. Գալան. Ա. 357. — 10. Նոյն՝ 359, 362-65. — 11. Նոյն՝ 352. — 12. Mansi, XXV, 1221.

գրած են Կդ. Գալանոս, Չամչեան, Ալիշան (Սխուտեի մէջ), Պալենեան, Տուռնըրիզ և ուրիշներ:

Ըսի և կը կրկնեմ՝ թէ այդ միութիւնը Հոռովմայ հետ՝ կը պահանջէր նաև քաղկեդոնեան վարդապետութեան ճանաչումը: Եւ իրականք Սոյ 1307ի և Ատանայի 1316ի ժողովները յայտնապէս դաւանեցին զայն՝. և Սոյ 1342ի ժողովը կրկնեց՝ թէ «սուրբ և փառաւորեալ ժողովն Քաղկեդոնի» ընդունելի էր Կիլիկիոյ Հայութեան. և թէ «մեք ի փոքր Հայաստան, և ոյք ի մեծն Հայաստան հնազանդին և միաբան են ընդ մեզ, ի բազմաց հետէ ընդ երկուս (յիշեալ) հանդիսական ժողովս հրաժարեալ ենք ի դսրովելոյ ըզսուրբն Լևոն պապ, և փառաւորեմք զնա ընդ սուրբն, և զժողովն Քաղկեդոնի ընդ այլ սուրբ ժողովսն, թէպէտև ոմանք ի մեծն Հայաստան, որ շմիաբանին ընդ մեզ, կացին ձեացին որպէս յառաջն էին»։ Այդ «ոմանք» արևմտեան վանականներ էին, որոց կեդրոն կը կազմէր Տաթևոյ մենաստանը, որոյ զլիաւոր ախոյեանք, Սիւնեաց պատմիչը, Յունան Որոտնեցի ու Գրիգոր Տաթևացի՝ ծանօթ դէպքեր են. և որոց կողմն էր Աղթամարի կաթողիկոսութիւնն ալ: Ասոնք մեկուսացած հայրապետական աթոռէն, կը շարունակէին փակ պահել իրենց աչքերը լուսոյ դէմ, մինչ հայ ազգին եկեղեցական ու քաղաքական բարձրագոյն իշխանութիւնը, հայրապետութիւնն ու թագաւորութիւն, և եկեղեցական ժողովները, ուստի պաշտօնական հայ եկեղեցին՝ իրենց բովանդակ հպատակներով հանդերձ կը ճանաչէին ու կը մեծաբէին Քաղկեդոնի ժողովն ու վարդապետութիւնը:

20. Ամփոփենք ինչ որ ըսինք ցարդ: Հայաստանեայց եկեղեցին Քաղկեդոնի ժողովէն վերջ 140 տարի կամ 12 հայրապետաց ժամանակ շարունակելով ապրիլ կաթող. Եկեղեցւոյ միութեան մէջ, որով և քաղկեդոնեան վարդապետութեամբ, այս

դաւանութիւնն այնքան խոր արմատներ ձգած էր իւր մէջ, որ յետ բաժանման ևս անջնջելի ձեաց, ոչ միայն յունական Հայաստանի մէջ, այլ արևելեան կողմն ալ, ուր հալածանաց հանդիպելուն՝ կը ծածկուէր, և խաղաղութեան շրջանին զլուխ կը բարձրացնէր ու կը զարգանար: Խօսքս կեդրոնացնելով բաժանուածն մինչև հայրապետութեան յիշմիածին փոխանցման ժամանակամիջոցին վրայ (591-1441), քաղկեդոնեանք հինգ հալածիչ ունեցան մեծ Հայոց կողմը. Վրթանէս տեղապահը և Աբրահամ, Եղիա, Անանիա մուկացի և Գէորգ Բ կաթողիկոսները: Ասոցմէ զատ յայտնի հակառակորդներ էին, թէպէտ ոչ հալածիչ, վեց հոգի. Մովսէս Բ, Դաւիթ Ա, Գէորգ Գ, Յովհ. պատմիչ, և Խաչիկ Ա ու Բ: Տասնուհինգ կաթողիկոսաց մասին ոչինչ ըսուած է. այսինքն հակաքաղկեդոնութեան որ և է հետը չեն թողած, ոչ զրով և ոչ պատմութեան մէջ. որով կամ ներքուստ քաղկեդոնիկ էին և կամ թույլատու: Յայտնապէս ներողամիտ էին Սիրոն Ա ու Սարգիս սևանեցի: Հակամէտ ու բարեկամ էին քաղկեդոնեանց՝ Կոմիտաս ու Պետրոս Գիտաղարձ: Շատ հաւանօրէն նոյն դաւանութեան յարած էին Անաստաս Ա ու Բարսեղ Ա:

Համոզուած անոր և նոյնը կ'ուսուցանէին ՅՏ. Իմաստասէր ու Մաշտոց, վերջինս բռնութեան տակ հրաժարելով անտի: Յայտնի քաղկեդոնիկ և Յունաց հետ արտաքսապէս ևս հաղորդակից էին՝ Նզըր, Ներսէս Շինոզ, Սահակ ձորափորեցի, Զաքարիա և Վահան Ա: Իսկ միջին դարէն՝ նոյն համոզմամբ ու Հոռովմայ հետ ալ միացած էին Պահլաւունիք՝ Գր. Վկայասէր, Գրիգորիս, Ն. Շնորհալի, Գր. Տղայ, Ապիրատ, և բոլոր կիլիկեցի կաթողիկոսունք մինչև ցրաժանուէն աթոռոյն, որոցմէ շատերուն Հոռովմայ հետ թղթակցութիւնն ալ կը յիշուի, և միութեան յայտնի գործեր, որոց մէջ նշանաւոր է Հայոց մասնակցու-

1. Պալէ. 273, 296. — 2. Mausi, XXV, 1190-91, 1222, 1221. — 3. Հմտ. Զատ. Գ, 190, 226, 290,

321, 324, 328, 341, 353 և.

թիւը 1438ին, Կոստանդին վահկեցւոյ օրով, փլորենտեան ժողովոյն՝ որ զուսմաւ լուեցաւ եկեղեցեաց միութեան համար¹։ Յիշեալ հայրապետաց հետ կային նաև բազմութիւնք իրենց ժամանակակից եպիսկոպոսաց ու վարդապետաց, որոց մէջ նշանաւոր են Խոսրով անձնացի, Գր. Նարեկացի, Ն. Լամբրոնացի և այլք։ Նոյնպէս մեր թագաւորներէն զիտնական Գագիկ Բագրատունին, Ապուսահլ, Աշոտ և Արուստահլ Արծրունիք, և Կիլիկիոյ բոլոր պատկաւորները։

Վերջապէս հայ եկեղեցին հանդիսապէս ընդունեցաւ Քաղկեդոնի ուղղափառութիւնը՝ Կոստանդնուպոլսի (591) և Կարնոյ առաջին (591) ժամական ժողովոց, և Կարնոյ երկրորդ (628), Շիրակունի (862), Հոռովայի, Սոյ կրկին և Ատանայի համազգային ժողովոց մէջ, իսկ ժողովուրդը տարուեր է ժամանակի հոսանքէն, Կիլիկիոյ մէջ միահամուռ հետեւելով հայրապետական և արքայական աթոռոց ուղղութեան, և արեւելեան կողմի՝ իրենց առաջնորդաց նպատաւոր կամ հակառակ թեւադրութեանց։ Սոյ 1342ի ժողովը կիլիկեան դաւանութեան ճշգրիտ սահմանը կ'ամփոփէ հետեւեալ տողերու մէջ. «Մեք արկանեմք ջուր ի պատարագն, և կատարեմք զսօսն ծննդեան ի իւր ղեկեմքերի, և ասեմք ի Քրիստոս երկուս բնութիւնս ի միում անձին որդւոյն Աստուծոյ, և ընդունիմք զժողովն Քաղկեդոնի, և դաւանեմք զըստարանն, և ճանաչեմք զգլխաւորութիւն Հոռովայ»։ մինչ Աղթամարայ և Աղուանից աթոռները, կ'ըսեն, ասոնց հակառակը կը դաւանէին²։

1441է վերջ Էջմիածնի աթոռին վրայ բազմող ոչ սակաւ կաթողիկոսներ ալ կը տեսներ ի միութեան Պետրոսի զահուն հետ, Ստեփանոս սալմաստեցի 1541ին այդ նպատակով մինչև ի Հոռով գնաց³։

Եւ զբոլ ու ղեսպանով իրենց մեծարանքը, հպատակութիւնն ու դաւանակցութիւնը յայտնեցին հետեւեալները։ Միքայէլ սեբաստացի՝ 1562ին՝ Էջմիածնի ամբողջ միաբանութեան կողմանէ⁴։ Միլիքիսեղի՝ 1610ին և 1613ին⁵։ Մովսէս տաթևացի՝ 1629ին՝ իւր և 12 եպիսկոպոսաց ստորագրութեամբ⁶։ Փիլիպպոս աղբակեցի՝ 1647ին՝ 25 եպիսկոպոսաց և 8 վարդապետաց ձեռնագրով⁷։ Յակոբ Գ՝ 1680ին⁸։ Նահապետ եղեռացի՝ 1695ին⁹։ Աղբեսանդր ջուղայեցի՝ 1709ին, և Կարապետ զեթունացի՝ 1727ին¹⁰։ — Այսպէս նաև Պրլոյ պատրիարքներէն Յովհաննէս Գ՝ 1631ին ի Հոռով գնաց ուխտի և հպատակութիւն յայտնելու։ Զարարիա Ա, Կիրակոս Ա, Խաչատուր Ա (1642ին) և Թովմաս Բ նաւակներով նոյնպէս իրենց հնազանդութիւնը ցոյց տուին նոյն աթոռին¹¹։ Ասոնց ամենուն թղթերն ու յիշատակները կեցած են։

Սակայն հակառակութեան հին խմորը, զոր ծածկուած տեսանք հիւսիսային կողմերը¹², ղէպ ի ծղար հասաւ Պրլոյ պատրիարքական աթոռը։ Եւ 1700էն, այսինքն այն պահուն իսկ՝ ուր Էջմիածնի կը շարունակէր սէր և միութիւն արտայայտել Հոռովայ, Թուրքիոյ ոստանին մէջ բուռն հալածանք սկսաւ կաթողիկէ Եկեղեցւոյն յարող հայ կղերին ու ժողովուրդեան դէմ, և տեեց մինչև 1722, Եփրեմ, Յովհ. Ըզմիւռնիսացի, Սահակ, Յովհ. զանձակեցի և Յովհ. բաղիշեցի պատրիարքաց ձեռնով¹³, և որոյ պսակուած եղաւ 1828ին՝ Կարապետ պատրիարքի օրով՝ 12000 կաթողիկեայց ձմեռնային մահաբոյր արտոն ի Փոքր Ասիա։ Այս հոգին էր որ հետ գնետէ ընդարձակեցաւ ազգին մէջ, ու Լայնեց բաժանումը նաև արևմտեան եկեղեցիէն, ըստիպելով կաթողիկեայ Հայութիւնն իւր առանձին նուիրապետութիւնն ունենալ¹⁴։

1. Զմայ. Գ. 473-75. Պաւլ. 80-147. — 2. Mansi, XXV, 1223. — 3. Զմայ. Գ. 513. — 4. Նոյն՝ 519. Պաւլ. 151. — 5. Պաւլ. 160-61. — 6. Արուս. Պետ. 270. Զմայ. Գ. 611. — 7. Արուս. Պետ. 274. Զմայ. 621. — 8. Արուս. Պետ. 275. — 9. Անդ՝ 282. Զմայ.

724. — 10. Զմայ. 749, 603. — 11. Արուս. Պետ. 271. — 12. Բզմ. 36. — 13. Զմայ. Գ. 729-30, 731, 732, 766, 751-55, 756-58, 759-62, 771-79. — 14. Պաւլ. 175.

Եզրակացնելով, Հայք նաև յետ բաժանման աւելի ընդունող եղեր են ֆազկեզոնի քան մերժող: Եւ բաժանումն ուրիշ բան չէր՝ բայց կուսակցական ինդիր մը. եր-

կու հատուածներ, որոց մերթ մին զօրացեր է և մերթ միւսն՝ ըստ քաղաքական պարագայից:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Գ. ԴԱՐՈՒ ՄԷՋ

(Շարունակութիւն, տես Բազմավէպ 1928 էջ 6)

Զ. — Եկեղեցական ճարտարապետութեան հարցն յուզուած ժամանակ, առ հասարակ ընդունուած էր մինչև վերջերս այն կարծիքը, թէ Միլանու Հրովարտակէն յետոյ է որ յայտ եկաւ և բաժանուեցաւ հեթանոսականէն, որոշ ձևով և մտածութեամբ որ յատուկ է քրիստոնէական կրօնքին, ըստ այնմ «ԶԴՆ» բաժին կայ հաւատացելոյն ընդ անհատին, կամ զինչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ ընդ մեհնաց՝: Ուստի քրիստոնէայ ճարտարապետն, հրաւիրուած կառուցանելու հաւատացելոց տաճարն, նա ստիպուած էր շէղիլ հին հեթանոսական արուեստէն, մեհնական ոճէն, և նոր ճանապարհ բանալ, նոր ոճ և ճաշակ մտցնելու, ի նկատի առնելով հաւատացեալների զանազան դասակարգութիւնը, որ առաջին դարերուց մինչև Գ դարուն և Ե՛ վերջերն խստութեամբ կը պահուէր Եկեղեցւոյ մէջ:

Մեր նախընթաց յօդուածներու մէջ ակնարկեցինք որ առաջին և երկրորդ դարերու քրիստոնէայը առանձնականաց տուներու մէջ կը հաւաքուէին Ս. Խորհուրդները կատարելու. բնականաբար բացի մեծամեծներու տներուց, ամէնքն չէին ունենար դահլիճ մը (Բագրիլիկա անգամ կոչուած) հետեւաբար Սարկաւազներն ամէն արթնութիւն կը բանեցնէին որ Ս. Պատարագի ժամանակ՝ երեխայք, թերահաւատներ և ապաշխարողներ հեռանային և

զգուշութեամբ գոցուէին դռներն: Անշուշտ ո՛չ երէցն կամ եպիսկոպոսն և ոչ ժողովուրդն կրնային զօր լինել իրաց այս վիճակէն. ուստի երբ աւելի ազատութիւն ունեցան քաղաքական կեանքով ապրիլ և հասարակաց աղօթարան մ'ունենալ, այն ատեն նորա չխորշեցան բնաւ ընդգրկելու քաղիլիկալ ոճն, որու պատճառն արդէն տրուեցաւ, թէ մեհնաներէն կը տարբերէին, թէ կրօնական որ և է հանգամանք չէին ներկայացներ, այլ ժողովուրդական և կենցաղական բնոյթ ունէին, յորս կը յաճախէին և քրիստոնէայք, առանց խիղճ ընելու որ կոտոց պաշտամունքի հաղորդ զրտնուէին. հասարակաց ժողովարաններ էին թէ՛ դատարանական և թէ՛ առեւտրական գործառնութեանց համար. վերի մասն ուր է կիսաբոլորն, Ատեանն էր — Tribune — իսկ վարի մասն կարելի է այժման ստույժով ասել Սակարան (Bourse): Ուստի Եկեղեցական իշխանութեան խոհեմութեան յանձնուած էր զայն թեթեւ բարեփոխութեամբ յարմարեցնել քրիստոնէական կրօնից խորհրդոց և ծխից մատակարարութեան. և այդ բարեմասնութեան մէջ առաջնութեան պատիւը խեցին Արևելեան զաւառներն, ուր 313^Ի յառաջ քրիստոնէութիւնն բարձր ի զուլիս կը պարծէր շքեղ յաղթանակներով հեթանոսութեան վրայ:

Եւ արդէն, զէթ Գ դարու կէսէն յետոյ որոշ նկարագրով եկեղեցիք կառուցուած էին զանազան քաղաքներու մէջ, որոնք